

տամբ երեսաց շահուած ստացուածքը չլինելով, յարգ չունէին՝ Աստուծոյ ընծայուելու համար: — Մեր այս պայմաններն առնելու ենք մատաղի բոլոր տեսակաց համար:

Բ. Ազգայի յատուկ՝ միայն մսեղէնք չէին, այլ ուրիշ ուտելի եւ ըմպելի նիւթեր եւս, որոց կը պատահինք ամէն ժամանակ: Մանդակունին Աստուծոյ նուիրաց մէջ կը թուէ «կալոյ եւ հնձանի» արդիւնքը, եւ անոցմէ լաւագոյնը կը պահանջէ, ինչպէս անասնոցը (57, 62): Ս. Սահակայ կանոնք կը յիշեն նոյնպէս «պըտուղ յամենայն արմտեաց», եւ կ'ուզեն որ լինի «յառաջին արմտեաց, այս ինքն յընտրոցն, զի զեղծցին կալք ցորենոյ եւ իւղոյ» (111): Համաձայն էր այս մովսիսական օրինաց պատուիրած «առաջին արմտեաց» (Եւք, ԻԳ, 19), որ Հայոց մէջ կը կոչուէին նաեւ «երախայրիք» (Բ. Օր. ժԸ, 1. Սահ. 128) կամ «նախան» (Սահ. 112). եւ էին մեր «նորեաց տօնին» իսկական ընծայն (աստ, 317):

Այս կարգի նուիրատուութիւնք կը շարունակեն միշտ: Տարօնացին կը կրկնէ՝ թէ իւր օրով դեռ «այս սովորութիւն է ազգիս Հայոց՝ զի յամենայն պտղոցն տան զպատարագս Աստուծոյ». այս ինքն է «ի